«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

28 Փետրվարի 2023, N 5 - 10

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանող Կարո Արտակի Հովհաննիսյանի ուսանողական իրավունքները վերականգնելու մասին

Լսելով և քննարկելով՝
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2020 թվականի նոյեմբերի 15-ի N ՈՒՄ /107/ 16-Ա հրամանով 2020-2021 ուսումնական տարում համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունված (վճարովի հիմունքներով), պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ ռեկտորի 2021 թվականի փետրվարի 5-ի N ՈՒՄ /15/ 31-Ա հրամանով 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կուրսի 1-ին կիսամյակից ուսումնառությունը դադարեցրած, պարտադիր զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով 2022 թվականի սեպտեմբերի 21-ին վաղաժամկետ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ (20.02.2023) դիմած ուսանող Կարո Արտակի Հովհաննիսյանի ուսանողական իրավունքները 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում վերականգնելու մասին հարցը:

Հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2022 թվականի հունվարի 26-ի N 05/11.2/548-2022 գրությամբ առաջարկվել է ազգային բանակ զորակոչվելու կապակցությամբ

ուսումնառությունը դադարեցրած, արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցած և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման հարցը քննարկել համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ հաշվի առնելով պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակը (առողջական, հոգեբանական խնդիրներ, զինվորական կոմիսարիատներից զինվորական գրքույկների տրամադրման ուշացումներ և այլն), ինչպես նաև այն հանգամանքը, որ Կարո Արտակի Հովհաննիսյանը սահմանված ժամկետում իր ուսանողական իրավունքները վերականգնելու համար չի դիմել համալսարան, քանի որ ունեցել է առողջական խնդիրներ և զինվորական կոմիսարիատից (ՀՀ ՊՆ ԶՔՀԾ Երևանի N 4 տարածքային ստորաբաժանում) զինվորական գրքույկը տրամադրվել է ուշացումով՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Կարո Արտակի Հովհաննիսյանի** ուսանողական իրավունքները **վերականգնել** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության **«Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրսում 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից**:

   Հաշվի առնել, որ Կարո Արտակի Հովհաննիսյանը մինչև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելը՝ 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանում հանձնել է կրթական ծրագրով նախատեսված բոլոր դասընթացների ստուգարքներն ու քննությունները:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. փետրվարի 28
Երևան